



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



Ս. ԾՆՆՂԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

## **Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԵՋ**

«Արարատ Տան» բնակիչ մամիկներուն եւ պապիկներուն համար, Ուրբաթ, 4 Յունուար 2008 թուականը եղաւ յիշատակելի եւ ուրախ օր մը, որովհետեւ Թեմիս հոգեւորականաց Դասը, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր՝ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Ս. Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնին առիթով այցելութիւն մը տուաւ «Արարատ Տուն» եւ Ս. Պատարագ ու Ջրօրհնէքի արարողութիւն կատարեց հիմնարկին բնակիչներուն պատասխանատուներուն ներկայութեան:

Այցելութիւն տրուեցաւ «Արարատ Տան» հիւանդանոցի բաժինը, ուր Առաջնորդ Սրբազան Հայրը իր ուրախութիւնը յայտնեց պատասպարեալ հայրերուն եւ մայրերուն, նկատելով, որ կը գտնուին գուրգուրոտ եւ սիրով զեղուն անձերու խնամքին տակ: Ան բարձր գնահատեց հաստատութեան պատասխանատուները, տնօրէնութիւնը, պաշտօնէութիւնը եւ նուիրեալ ծառայողները, բոլորին Ս. Ծննդեան տօնը շնորհաւորեց եւ մաղթեց, որ ծնեալ Փրկիչը բոլորին շնորհէ առաւել կեանք, ծառայութեան վարձատրութիւն, հոգեւոր ուրախութիւն եւ երջանկութիւն:

Ապա կատարուեցաւ Ջրօրհնէքի աւանդական արարողութիւն, հաւաքական խոստովանանք. քահանայ հայրերը Ս. Հաղորդութիւն բաշխեցին ներկաներուն, որմէ ետք բոլորը միաբերան երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Այնուհետեւ, մատրան մէջ մատուցուեցաւ Ս. եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ խմբավար Կոմիտաս Զեշիշեանի:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց «Արարատ Տան» բնակիչ մամիկներուն ու պապիկներուն Նոր Տարին, աղօթելով ու մաղթելով բոլորին առողջութիւն, ցաւերու թեթեւութիւն եւ երջանիկ օրեր:

Այս առիթով յատուկ աղօթք եւ «Հոգւոց» արտասանուեցաւ «Արարատ Տան» երկար տարիներու հոգաբարձու եւ պատասխանատու, նաեւ Առաջնորդարանիս սերտ բարեկամ Պապ Շամլեանի հոգւոյ ի հանգիստ, ինչպէս նաեւ՝ համայն ննջեցելոց ազգիս:

Արարողութեանց աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ հոգեւորականաց դասը, «Արարատ Տան» բնակիչներուն եւ

պատասխանատուներուն հետ վայելեցին Աստուծոյ բարիքներէն՝ սեղանակից ըլլալով անոնց, որմէ ետք շնորհակալութեան փոխադարձ զգացումներով բաժնուեցան՝ յոյսով եւ ուրախութեամբ լեցուն:

*ON THE FEAST OF THE NATIVITY AND THEOPHANY*

**DIVINE LITURGY AT ARARAT HOME**

On the occasion of the Birth and Theophany of our Lord, Divine Liturgy was celebrated on the morning of Friday, January 4<sup>th</sup>, at Ararat Home, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The blessing of water ceremony also took place.

Upon their arrival, the Prelate and clergy members visited the hospital where the Prelate commended the administration for their hard work and conveyed his blessings to the patients and administrators. The blessing of water followed, after which the residents were offered Holy Communion.

Divine Liturgy was then celebrated in the chapel by Rev. Razmig Khatchadourian, pastor of Holy Martyrs Church in Encino. During the service the Prelate said a special prayer for long-time Ararat Home Board Chairman and Prelacy friend, the late Bob Chamlian and for all our departed.

The visit concluded with the residents enjoying lunch with the Prelate and clergy.